Խաչիկ Թեոլեոլյան (ԱՄՆ), Վեսլին համալսարանի
պրոֆեսոր, «Diaspora» հանդեսի խմբագիր

ՌՈՒՍԱՀԱՅ ՆՈՐ ՍՓՅՈՒՌՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Սփյուռքները հին երևույթ են, սփյուռքագիտությունը՝ նոր: Ամենեն հին սփյուռքը կնկատվի հրեականը, որ ծագում առած է Ն. Ք. 585-ին: Սփյուռքագիտության սկզբնակետը կհամարվի 1991 թվականը, երբ Օքսֆորդ համալսարանի հրատարակչութունեն սկսավ լույս տեսնել նյութին նվիրված առաջին գիտական պարբերաթերթը՝ «Diaspora. A journal of transnational studies», այսինքն՝ «Սփյուռք. անդրազգային ուսումնասիրություններու հանդես»: Անշուշտ այս թվականեն առաջ ալ մտավորականներ և գիտնականներ, հատկապես հրեաներ և հայեր, լուրջ ուսումնասիրություններ հրատարակած էին իրենց ժողովրդի ցրոնքին և գաղութներուն մասին (օրինակ՝ Հ. Աճառյան, Ա. Ալպոյաճյան), սակայն սփյուռքագիտությունը, իբրև համաշխարհային գիտակարգ, գոյություն չուներ:

Ներկայիս, սփյուռքագիտությունը աշխուժ ճյուղ մըն է, որուն այժմեության և կայտառության կը սատարեն զանազան ազդակներ, հատկապես գաղթականության (migration) թափը, անոր կարևորությունը ժողովրդագրական (demographic) և տնտեսական մարզերուն, ապա նաև նոր սփյուռքներու կազմավորման մեջ: Միաժամանակ գիտակարգի արագ աճը ունի խնդրական հետևանքներ, զորս հետազոտողները չեն կրնար անտեսել: Անոնք կապ ունին թե՛ մեթոդի, թե՛ ալ հետազոտության առարկայի (object of knowledge) հղացքին և նյութին հետ:

Մեթոդի կապված հարցը կը բխի այն իրականութենեն, որ ոչ մեկ գիտակարգ կը տիրապետե սփյուռքագիտության: Սկզբնական տարիներու հիմնադիր և տիրապետող դեմքերը զանազան ճյուղերու հատուկ մտածողություն և մեթոդ կը կիրարկեին, օրինակ քաղաքական գիտություն (Շեֆֆըր, Սաֆրան), մարդաբանություն (Վերթովեք, Քլիֆորդ), ընկերաբանություն կամ սոցիոլոգիա (Ռոբին Քոհըն) և գրականագիտություն (Թեոլեոլյան): Անսպասելիորեն կարևոր դեր ունեցան գրականագետներ, որոնց գիտական հետաքրքրության կիզակետներն էին այն նոր գրականությունը, որ կը ստեղծվեր գաղթականության, համաշխարհայնացումի (globalization), շարժունակության (mobility), անդրազգայնության (transnationalism) և հետգաղութատիրության (postcolonialism) ազդեցության շնորհիվ: Տարբեր գիտակար-

գերու մեթոդներ անկարելի եղավ ծուլել, և ուրեմն սփյուռքագիտությունը կը մնա տարասեռ (hybrid) գիտակարգ մը:

Գրեթե նույնն է «սփյուռք» հղացքի պարագան: 1964-ին երեք դասական կամ ավանդական սփյուռքներ ընդունված էին (հրեական, հայկական, հունական): Հաջորդող հիսնամյակի ընթացքին, սկսելով «Աֆրիկյան սփյուռք» կոչումեն (1964) առնվազն վաթսուն հավաքականություններ, փոքրամասնություններ, էթնիկ խումբեր, իրենց հայրենիքեն դուրս ապրող և աշխատող նորաստեղծ գաղթականական խմբավորումներ իրենք զիրենք «սփյուռք» կոչեցին և կամ «կնքվեցան» ու «մկրտվեցան» իբր այդ, որոշ մասնագետներու կողմէ: Այս փոփոխությունները ստեղծեցին անսովոր իրավիճակ մը, որուն մեջ կարելի է սփյուռքյան համայնք կամ պարզապես «սփյուռք» կոչել թե՛ 175 տարիե ի վեր Նյու Յորք հաստատված հրեաները (1.200.000 հոգի, հսկա տնտեսական, քաղաքական, և մշակութային ուժ), թե ալ, օրինակ, վերջին երեսնամյակին Աֆրիկյան Զիմբաբվե հանրապետության մեջ հաստատված 250 իռլանդացիները (The Irish Times, «Մուկաբեի շուքին ապրող իռլանդացի գաղթականներ» հոդված, մայիս 23, 2015): Միևնույն հոդվածին մեջ այս իռլանդացիները կը կոչվին սփյուռք, արտագաղթող (emigrant) և expatriate, բառ մը որ կորակե սովորաբար ունևոր անձեր, որոնք կը նախընտրեն իրենց հայրենիքեն դուրս ապրիլ, պահելով սակայն իրենց հայրենիք-ապաստանի (իռլանդական) քաղաքացիությունը:

Այս շփոթեցուցիչ վիճակը ունի նաև հավելյալ ծալքեր, որոնց հպանցիկ ձևով միայն կարելի է անդրադառնալ հոս: Նախ՝ չկա համաձայնություն, թե սփյուռքը զուտ առարկայական (objective) երևույթ մըն է՞, կամ թե նաև ունի կենսական, ենթակայական (subjective) բաղադրիչ մը՝ ինքնության գիտակցությունը: Օրինակ, եթե մասնագետներ հաստատեն, որ պոլսահայությունը սփյուռքային համայնք մըն է, սակայն պոլսահայերը մերժեն այդ, մասնագետները, գիտնականները իրավունք ունի՞ն շարունակել հաստատելու՝ «Բայցևայնպես սփյուռք են»: Եթե սևամորթ մտավորականներ հաստատեն, որ ԱՄՆ-ի խափշիկները Աֆրիկյան սփյուռք մըն են, և հազարավոր ուրիշ ամերիկացի սևամորթներ կտրուկ կերպով մերժեն այդ պիտակը, որովհետև չունին և չեն ուզեր ունենալ սփյուռքյան ինքնություն և գիտակցություն, իսկապես սփյո՞ւռք են: Երբ Հայաստանեն նոր արտագաղթած մի քանի հազար հայեր կը հաստատվին Չուվաշիայի մեջ, անոնք միգրանտներու խմբա՞կ մըն են, թե սփյուռքյան համա՞յնք, և ո՞ր բաղադրիչ տարրերը մեկը մյուսեն կը զանազանեն:

Կայ ազդու փիլիսոփայական մտածելակերպ, որ կրնա հստակեցնել հարցը, սակայն սփյուռքագետներու մեծամասնությունը կանգիտանա զայն: Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոք (John Locke), 1689 թվականին հաստատեց, թե միևնույն բառը երկու տարբեր իմաստ-

ներով գործածել արտոնելի է որոշ պայմաններու մեջ: Նման գործածություն կենթադրե բառի մը nominal (անվանական) և real (իրական) տարբերակներ: Այսպես, երբ կը խոսինք հայության ընդհանուր ցրվածության մասին իր հայրենի օրրանեն դուրս, կրնանք խոսիլ բոլոր «արտահայրենիք» ապրող հայերու մասին՝ իբրև ցրոնք կամ դուրսը սփռված հայեր. իբրև անվանական սփյուռք: Սա հարմար, պիտանի լեզվական ոճ մըն է ոչ-գիտական մտածումի համար, քանզի կը ներառնե ծավալուն երևույթի մը բոլոր ենթագավառները, Չուվաշիո մի քանի հազար նորելուկ միգրանտներեն մինչև, ասենք, Մարսեյլ (Ֆրանսա)-յի 95.000-նոց սփյուռքյան համայնքը, որ գոյություն ունի գոնե 120 տարիե ի վեր, օժտված է կառույցներով և տեղական ղեկավար վերնախավին հետ սերտ կապերով: Այլ խոսքով, Չուվաշիայի հայ միգրանտները դեռ անվանական «սփյուռքյան» համայնք կը կազմեն, Զիմբաբվեի իռլանդացիներուն նման, մինչդեռ Մարսեյլի հայությունը՝ «իրական» սփյուռք է՝ ըստ սփյուռքագիտական գիտակարգի: Պետք է ընդգծել, որ այս երկփեղկվածության մասին որոշ գիտնականներ շատ ավելի խիստ են ու պահանջկոտ, ուրիշներ՝ ոչ:

Սփյուռքագիտությունը կը շարունակե մնալ կայտառ և արդյունավետ գիտակարգ, որ շնորհիվ իր բազմակեդրոնային կառույցին, սփյուռքներ սահմանելու պարագային բաժնված է խստապահանջներու և հանդուրժողներու, մերժողներու և ընդունողներու միջև: Որքան կը բազմանան նոր գաղթականական-միգրանտ համայնքները, այնքան կը զորանա «սփյուռք» բառի անվանական օգտագործումը: Այս ընթացքին հետ զուգահեռ կընթանա մեկ այլ բարդութենական ծալք մը: Տասնամյակներե ի վեր արևմտյան հասարակական գիտություններուն համար թնճուկ մըն է ինքնության (և անոր անքակտելիորեն կապված) գիտակցության հարցերը: Չափազանցություն չէ ըսել, որ անձնական և հավաքական ինքնություններու հարցերը հուզած են հարյուրավոր հեղինակներ: Հիմնահարցը սա է. ինքնությունը էութենակա՞ն հարց մըն է: Որքանո՞վ զգացականության հաստատումեն կը բխի (օրինակ՝ «Ես 1/4 հայ եմ՝ բնախոսական հաշիվով, սակայն ինքզինքս հարյուր տոկոսով հայ կը զգամ») և որքանո՞վ առարկայականեն, այսինքնհայու ինքնությունը կատարողական (performative) է և ուրեմն շոշափելի գործն է, հասարակական կյանքի մեջ դերակատարությունն է,որ կը հիմնավորե ինքնությունը: Ներկայիս բազմաթիվ արևմտյան մասնագետներսկսած են խուսափիլ առաջինեն և սևեռիլ երկրորդին վրա: Հետաքրքրական է, որ այս մոտեցումը սկսած են նախընտրել նաև խումբ մը երիտասարդ հայրենի գիտնականներ, որոնք կը գրեն սփյուռքագիտական գիտաժողով մը առաջարկելու ընթացքին, որ երբ միգրանտների համայնքներ պահանջում են «սփյուռք» տիտղոսը, նախընտրելի է «ի՞նչ է սփյուռքը անում» կտրվածքով աշխատել՝ առաջ անցնելով «ինչ է

սփյուռքը» դիսկուրսից: Այս ձևով կը խուսափին ինքնության սահմանումի, էության, գիտակցության, ենթակայականի թնջուկներեն, կը դժվարացնեն սփյուռքյան մշակույթի շատ կարևոր հարցի վերլուծումը, կանտեսեն Լոքյան անվանականի օգտակարությունը, բայց և այնպես կը ցուցաբերեն առողջ մտածելակերպ՝ արագորեն գործի անցնելու հարմար:

Հակառակ անհամաձայնություններու, վերլուծական մեթոդներու բազմազանության և երբեմն անհաշտության, կարելի է հաստատել, որ գոյություն ունին սփյուռքներու հատուկ որոշ ընդհանուր հատկանիշներ: Օգտակար է արագորեն թվարկել զանոնք.

ա) Սփյուռքը կը ծնի, կը սկսի իբրև սփռում, ցրվում, տարածում հայրենիքեն դուրս, մեկե ավելի երկիրներու մեջ:

բ) Մինչև 1964, բիրտ ուժը կը համարվեր սփյուռքատիպ ցրումի վավերական պատճառը: Սակայն ներկայիս ամեն տեսակի բրտություն, հալածանք, ապա նաև տնտեսական զրկում կընդունվին իբրև նման ցրումի վավերական ազդակներ:

գ) Սփյուռքատիպ ցրոնքները անոնք են, որոնք չեն փափագիր ձուլվիլ զիրենք ընդունող մեծամասնություններուն մեջ և կամ, ինչ որ է սևամորթներու պարագան նախա-1970-ական ԱՄՆ-ի մեջ, երբ այդ օրենքով չարտոնվիր:

դ) Սյուռքյան համայնքները չեն ուզեր կորցնել իրենց կապը հայրենիքի հետ: Բացառությունն է գնչուներու (ցիգան) մեծ սփյուռքը, որ «հայրենիք» չէ ճանչցած Ք.Հ. 8-րդ դարուն Հնդկաստանեն արտագաղթելե ետք: Բազմաթիվ, բայց ոչ բոլոր սփյուռքյան համայնքներու վերնախավին մեջ կը հանդիպինք նաև ուրիշ սփյուռքյան համայնքներու հետ կապ մը պահելու փափագին: Գիտնականներ, մեծահարուստներ և մտավորականներ, երաժիշտներ և այլ արվեստագետներ կարևոր դեր ունին այս ճիգի իրականացման մեջ: Վերջին տասնամյակին արագընթաց և տակավին լավ չուսումնասիրված ձևերով թվայնացված ու ցանցային երևույթը սկսած է փոխակերպել միջսփյուռքյան կապերու հարցը:

ե) Որքան ազդու է սփյուռքյան համայնքեն դեպի դուրս, դեպի այլ համայնքներ և հայրենիք դարձը, արևելումը (orientation), նույնքան կենսական է նորահաստատ համայնքի դեպի ներս դարձը: Թերևս սփյուռքագիտության ամենեն խրթին, կնճռոտ հարցերեն մեկը այն է թէ որո՞նք են ներսահակ համայնքային գործունեության միջոցներն ու նպատակները: Ստորև անդրադառնանք այս հարցի որոշ ծալքերու:

Իբրև արևմտյան սփյուռքագիտության մասնագետ, այս տողերը ստորագրողը չի կրնար հանդես գալ լիակատար հեղինակությամբ, երբ խոսքը, հարցը կը վերաբերի Ռուսաստանի մեջ տարածված հայ հին սփյուռքին և նոր գաղթականական ցրոնքին: Հաջորդող էջերը

կամփոփեն արևմտյան սփյուռքագիտության նշումները և դիտարկումները այն մասին, թե ե՞րբ և ինչպե՞ս ապաստանյալներու ցրոնք մը կամ գաղթական աշխատավոր միգրանտներու հավաքականություն մը կը փոխակերպվի, կը վերակազմվի ոչ միայն իբր անվանական, այլև իսկական սփյուռք, ի՞նչ գործոններու և ազդակներու շնորհիվ: Պետք է ընդգծել, նախ, որ հոս նշվելիք յուրաքանչյուր գործոն ամեն տեղ սփյուռքացման պարագային նույնքան ակտիվ գործոն չէ, բացառություններ միշտ կան, և երկրորդ, որ նույն գործոնը նույն կշիռն ու ազդեցությունը չունի այն բոլոր պարագաներուն՝ ուր կը գտնենք զայն: Կենսական է հիշել, որ «սփյուռք»-ը ընդհանրացում մըն է, մեկ կողմե՝ հղացք, մյուս կողմե՝ գոյություն ունեցող կոնկրետ համայնքներու ցանց, և որ ցանցին յուրաքանչյուր համայնք-հանգույցը վայր մըն է, ֆիզիկական տեղ մը, ենթարկված իր տեղական պայմաններուն և յուրահատկություններուն: Կը գործե և կը ձևակերպվի տեղվույն վրա, և ոչ վերացական տարածքի մը մեջ: Եվ վերջապես կարժե ընդգծել, որ անկարելի է մեկ model, մեկ տիպար բնորդ գործածել բոլոր վերլուծումներու ընթացքին: Տարբերությունները այնքան բազմաթիվ և խայտաբղետ են, որ ընդհանրացումները (generalization) պետք է մնան առկախված, պետք է սպասեն տեղական, վայրային համայնքներու մանրամասն և կոնկրետ վերլուծման արդյունքներուն: Այս ընդհանուր ճշմարտությունը հաստատելե ետք արտոնելի է նշել, որ թեև մեկ բնորդ չի կրնար առաջնորդել մեզ, կան տիպար վերլուծումներ, ուր սփյուռքագիտության տեսությունները և մեթոդները շատ լավ գործածված են մեկ սփյուռքյան վայրի, մեկ մանր, զարգացող և կազմակերպվող համայնքի մանրակրկիտ ուսումնասիրության ընթացքին: Այս տողերը ստորագրողը, երբ կը դասավանդե նորելուկ, միգրանտային, նախասփյուռքյան ցրոնքներու կազմավորումը և անցումային ընթացքը դեպի իսկական սփյուռքյան համայնք, իբրև տիպար վերլուծական նմուշ կօգտագործե Prof. Jan Abbink-ի (Յան Աբբինգ) մեկ ուսումնասիրությունը՝ խորագրված «Դանդաղ Զարթո՞ւմ. Նեդերլանդի Եթովպական սփյուռքը 1977-2007 թվականներուն» հրատարակված DIASPORA-ի մեջ (Հատոր 15, թիվ 2-3, 2006-2011): Այս հոդվածի մեթոդը և մոտեցումը օրինակելի կրնան ըլլալ նոր հայ ցրոնք-սփյուռքներու կազմավորման վերլուծումին համար ալ:

Երբ կը փորձենք վերլուծել-գուշակել նոր կազմվող հավաքականություններու ապագա հեռագիծը կամ շարժագիծը (trajectory), <u>առաջին</u> գործոնը զոր պետք է քննել, ընդունող-ընկալող պետության և անոր քաղաքացիներու մեծամասնության դիրքավորումն է նորահաս գաղթականներու հանդեպ: Նախ, Ռուսիո պետությունը արդյոք կը ցանկանա, որ հայ նորեկները կազմակերպվին և հարատևեն իբր հայ համայնք: Անտարբե՞ր է, կը դյուրացնե նման կազմավորումը,

կամ կը ստեղծե՞ խոչընդոտներ: Սա առաջնակարգ ազդակ և գործոն է, ոչ միայն հայ, այլ բոլոր նորակերտ սփյուռքներու պարագային (սակայն կենսական է չմոռանալ, այլ ընդգծել «պետության և անոր … քաղաքացիներու … դիրքավորումը» տողը): Այս զանազանումը կընդգծե տեղականին կարևորությունը՝ սփյուռքացող միգրանտային համայնքներու աշխարհագրության համար: Մեծ և բազմազգ պետությունները (Ռուսիո նման) կամ ընդարձակ բայց ոչ միատարրված պետությունները (ԱՄՆ-ի նման) կրնան ունենալ իրարմե շատ տարբերվող վարչական շրջաններ և ուրեմն հյուրընկալության տեղական կլիմաներ: Մեկ շրջանի մեջ տեղվույն բնակչության մեծամասնությունը կրնա ունենալ չեզոք, անտարբեր կամ նույնիսկ՝ դրական դիրքորոշում նորելուկ գաղթականներու հանդեպ, իսկ մյուսին մեջ՝ բացասական և անհանդուրժող: Ընդգծենք ու կրկնենք՝ սփյուռքյան համայնքները տեղական, վայրային բնույթ ունին: Թերևս կան պետություններ, որուն քաղաքացիները կեդրոնեն եկած հրահանգներուն կուրորեն կը հնազանդին, և եթե հրահանգը կը պարտադրե ընդունիլ միգրանտները, այդպես ալ կըլլա: Սակայն տեղվույն մեջ մեծամասնություն կազմող հասարակությունը անպայման չի բաժներ, չի կիսեր իր պետության նպատակը, անոր հակումը: Հարց պետք է տալ, թե արդյոք ան կը փափագի՞, որ իր շրջանը բեռնավորվի նոր փոքրամասնություն մը հյուրընկալելու պարտականությամբ: Եվ եթե ոչ, ինչպե՞ս պիտի հակազդե նորեկներուն, ապա եթե այդ հակազդեցությունը բացասական է, ինչպե՞ս պիտի ազդե ան նորեկներու տեղավորման «աշխարհագրության»: Միգրանտները մեկ թաղի, մեկ շրջանի մեջ հաստատվելե ետք կրնան այդ մեկնավայրեն արագորեն ցրվիլ (և ուրեմն ավելի դյուրավ ձուլվիլ), երբ ընդունող հասարակության վերաբերմունքը դրական է, հյուրասեր է, իսկ երբ բացասական է, կրնան գետտոյական դրույթ որդեգրել, տասնամյակներով կամ դարերով ապրիլ սեղմ շրջանի մը մեջ, սովորաբար ըլլալ նվազ բարգավաճ, նվազ արագորեն ինտեգրվող (integrated) երկրի տնտեսության և մշակույթի մեջ, և ուրեմն չձուլվիլ:

Հոս կենսական է ավելցնել, որ «գետտո»-ն (ghetto, իտալերեն, առաջին անգամ գործածված Վենետիկի մեջ, գրեթե արգելափակված հրեաներու թաղը պիտակող) թեև սովորաբարբացասական իմաստ ունի, կրնա նաև դրական նկատվիլ, անոր մեջ բնակողներու կողմե: Օրինակ՝ Նյու Յորքի Բրուքլին շրջանի մեջ կան թաղամասներ, որոնց չափազանց պահպանողական հրեա բնակիչները գոհ են իրենց անջատ և բարեկեցիկ վիճակեն, կը պայքարին ինտեգրման դեմ: Նույնիսկ չեն ուզեր «խառնվիլ» այն մոտակա հրեաներուն հետ, որոնք ազատական են և անտարբեր իրենց կրոնքին հանդեպ: Նմանօրինակ դիրքավորում կը տեսնենք ԱՄՆ գաղթող կուբացիներու մոտ ալ: 1959-են մինչև 2015, 46 տարիներու ընթաքին, 1.211.000 կու-

բացիներ հասան ԱՄՆ: Անոնցմե 940.000 կը բնակին Ֆլորիդա նահանգին մեջ, 500.000-ը Մայամի քաղաքի և անոր մոտակա արվարձաններու մեջ: Մայամիի Փոքր Հավանա թաղամասը կը նմանի Բեյրութի Բուրջ Համմուդին, ուր մինչև 1975, մոտ 75.000 հայեր կը բնակեին, 3 կմ² փոքր տարածքի մը վրա, և բնակչության խտությունը կը դյուրացներ սփյուռքյան համայնքի կերտումի հարցերը (ամուսնական, լեզվական, դպրոցական, թաղային խորհուրդ ևն): Մեծ քաղաքեն դուրս՝ Լիբանանի մեջ, կը գտնենք նաև Այնճար գյուղաքաղաքը, ուր 1938-են ետքը հաստատվեցան Մուսա Տաղի բնակիչները. ներկայիս՝ ձմեռը 2.700, ամռանը 5.000 բնակիչով: Այս գյուղն ալ, Քեսապի (Սուրիո) հայերն ալ պետք չէ կոչել գետտո, այլ «territorialized diaspora»՝ տեղայնացված սփյուռք՝ հակապատկերը շատ ավելի տարածված շարժունակ սփյուռքյան համայնքներու:

Նորաստեղծ սփյուռքյան համայնքներու հեռագիծին վրա ազդող երկրորդ գործոնը կը մնա նույնքան անորոշ, որքան կարևոր: Ցարդ սփյուռքագիտությունը չունի քանակական (quantitative) մեթոդ, վերլուծելու համար այն հարցը, թե հայրենիքեն մեկնող անձեր որքա՞ն կապված են ընդհանուր, ազգային ինքնության և կուզեն պահել այդ ինքնությունը: Պետք է զանազանել ազգակցական (kinship) կապը ազգայինեն: Գրեթե բոլոր ցրոնքներու մեջ, հատկապես առաջին բայց նաև երկրորդ սերունդին մոտ կը տեսնենք զորավոր, նույնիսկ վճռական դիրքավորում, հայրենիք մնացող ընտանիքի և ազգականբարեկամներու հետ կապ պահելու, անոնց օժանդակելու ևն: Սակայն սխալ է ենթադրել, որ այս վճռակամությունը կը նշանակե, որ գաղթականները (մանավանդ երկրորդ սերունդեն ետք) պիտի ուզեն ապրիլ իբրև ազգային ինքնություն պահող անձեր. Օրինակ՝ մնալ հայ, սփյուռքյան հայ համայնքի մը մեջ՝ որուն կերտումին, պահպանումին և բարգավաճության իրենք պիտի սատարեն: Այս տողերը ստորագրողը հաճախ հաստատած է, որ ցրոնքներ միայն անվանականորեն «սփյուռք» են առաջին երկու սերունդներու ապրած ժամանակահատվածին: Երրորդ սերունդը «փորձաքար» սերունդն է. անոր անդամները այլևս զորավոր անձնական, զգացական, ընտանեկան և ազգակցային կապեր չունին հայրենիքի բնակչության հետ, հաճախ լեզուն սկսած են մոռնալ և բարքերը անտեսել: Եթե նման պայմաններու մեջ որոշեն պահել հին, ապա նաև ստեղծել նոր կառույցներ, նոր ղեկավար վերնախավ և նոր տարասեռ մշակույթ, որ կը պահե կենսական տարբերություն մը շրջապատի տիրապետող մշակույթեն և հասարակութենեն և շնորհիվ իր յուրահատուկ կենցաղին և մշակույթին կընդունի տարասեռումը բայց կը մերժե ձուլումը, ապա կրնանք հաստատել, որ իսկական և երկարակյաց ըլլալու սահմանված սփյուռք մը կառուցված է:

Իբրև հետգրություն այս նյութին՝ կարժե ավելցնել որ բազմաթիվ վերլուծողներ և մասնագետներ կանխահասորեն կը համոզվին, որ սփյուռք ստեղծելու և պահելու վճռականությունը բնականորեն կա գաղթականներու, ցրոնքի մը մեջ, երբ անոր անդամները պերճախոս ձևով կը հաստատեն թե՛ հայրենիքի կարոտ, թե՛ ալ իբր սփյուռք գոյատևելու որոշում: Անշուշտ հետազոտող մը պետք է նշե, արձանագրե նման զգացումներ, որոնք անկեղծ են: Սակայն պետք չէ անտեսել, որ երկրորդ և հաջորդ սերունդներուն մեջ կան շատեր, որոնց համար հայրենիքեն և ավանդական կառույցներե ելքը անպայման ցավոտ կորուստ մը չէ, այլ ազատագրում մը այն ավանդություններեն և սովորություններեն, որոնք կաշկանդած են զիրենք: Բազմաթիվ Ամերիկա գաղթողներ կը վկայեն այս երևույթը: Այս պարագան կրնա կրկնվիլ Ռուսիա գաղթող հայերուն մեջ ալ:

Պետք է ընդգծել, որ կա երրորդ ցրոնքային հատված մը հայրենի ավանդությունները պահպանող և զանոնք թոթափել փորձողներեն անդին: Կան շատեր, հատկապես կյանքի կրոնական մարզին մեջ, որոնք դժգոհ են իրենց ավանդական եկեղեցիեն, բայց չեն ուզեր մնալ առանց կրոնական կառույցի: Այս իրավիճակը կը գտնենք Ամերիկայի մեջ, ուր բողոքականացումը շատ արագ կընթանա: Լատին Ամերիկայեն գաղթող սպանախոս կաթոլիկներու մեկ նշմարելի հատվածը երբ կը տեսնե, որ իրենց վրա միահեծան տիրող ավանդական կաթոլիկութենեն տարբեր այլընտրանքներ կան, կը միանա բողոքական եկեղեցիներու: Նմանապես վերջերս, երբ այս տողերը ստորագրողը Երևան կը գտնվեր (հունիս, 2018) բանիմաց հետազոտողե մը լսեց, որ վերջին երեսնամյակին Հայաստանեն Ռուսաստան հաստատվող հայերու մոտ տասը տոկոսը արդեն կրոնափոխ է՝ միացած է ռուս ուղղափառ եկեղեցիին: Այս թվերը կրնան անվստահելի ըլլալ, քանի որ չեն հիմնված մեթոդականորեն նախանձախնդիր հետազոտություններու վրա, սակայն կասկած չկա, որ Ռուսահայ համայնքին մեջ կրոնափոխության երևույթը արդեն գոյություն ունի և հավանակորեն պիտի աճի: Ամեն գաղթականություն ընդունող երկիրներու մեջ նույնը չէ պարագան: Օրինակ, Ֆրանսայի բնիկներու մեծամասնությունը անտարբեր է իր իսկ ավանդական քրիստոնեության հանդեպ, և ուրեմն նորեկներու քրիստոնյա կրոնքը և կրոնափոխությունը կարևոր գործոններ չեն այդ երկրի հայ սփյուռքին համար: Սակայն Ռուսիո մեջ, ուր պետությունը թիկունք կը կենա իր եկեղեցիին, ապա նաև ԱՄՆ-ի մեջ, ուր բնակչութեան մեկ կարևոր հատվածը հաճախ կրոնամոլ է (բողոքականներուն մեջ) կրոնափոխությունը կը մնայ հայկական կամ ուրիշ սփյուռքներու ձուլումի գործոն:

Ցարդ, այս հոդվածը չէ կեդրոնացած տնտեսական-քանակային գործոններուն վրա, ոչ ալ սևեռած է այդ մարզին սերտորեն կապված դասակարգային հարցերու վրա՝ ի բացակայություն տվյալներու: Եթե

զանոնք իմացողներ կան, անոնք կաշխատին Հայաստանի կամ Ռուսիո մեջ: Հոս միայն կարելի է հարց տալ թե ինչ կը թելադրե սփյուռքագիտությունը իբր հետազոտական ծրագիր:

Ընդհանրապես, երբ ցրոնք մը կը գոյանա իր հայրենիքեն դուրս, կապրի երկու սերունդ տևող անցումային շրջան մը, որմե ետք կամ կը ձուլվի, կամ կը ձևավորվի իբրև էթնիկական սփյուռք: Թե՛ անցումային փուլերուն, թե՛ սփյուռքյան հանգրվաններուն, բարդ ազդակներ են (ա) տնտեսությունը և իբր անոր հետևանք գոյացած ներքին դասակարգային համակարգը, ապա նաև (բ) պետութենե զուրկ այս հավաքականության համար՝ ղեկավար վերնախավի մը գոյացումը, և վերջապես, թեև անոր կապված, բայց և այնպես տարբեր (գ) նորաստեղծ կենցաղի և մշակույթի հարցը:

Տնտեսական հարցին քաջածանոթ է արևմտյան սփյուռքագիտությունը: Ունի որակումներ, ինչպիսին է «labor diaspora»՝ աշխատավորներու սփյուռք, օրինակ՝ Արաբական կամ Պարսից Ծոցի քարյուղի պետություններուն մեջ (Քուվեյթ, Քաթր, Բահրեյն, Սաուդի Արաբիա, էմիրատներ) աշխատող երկու միլիոնի մոտ ֆիլիպինցիներ, պակիստանցիներ, հնդիկներ, շրիլանկացիներ և այլն, որոնք թեև հաճախ անփութորեն սփյուռք կը կոչվին, իրականին աշխատավորական ցրոնք մըն են, որոնց չարտոնվիր կազմակերպվիլ և ապրիլ անցում՝ դեպի իսկական սփյուռք: Նաև կան տարբեր որակումներ, օրինակ՝ «merchant diaspora»՝ վաճառականական կամ բիզնեսի սփյուռք, ինչպիսին էր Հնդկաստանի Նոր Ձուղայական սփյուռքը՝ 1620-1722 թվականներուն, ևն: Կազմավորվող սփյուռքները ժամանակի ընթացքին կունենան տնտեսական-դասակարգային բարդ կառույց (Թիֆլիսի, Պոլսի, Իրանի մեջ, ապա նաև Բեյրութի), որովհետև ժողովրդի մեջ կան աշխատավորներ, միջին դասակարգի մանր ու մեծ բուրժուա-քաղքենիներ, ապա նաև մեծահարուստներ, ամիրաներ, աղաներ, մանթաշեֆներ:

Ներկայիս, արևմուտք բնակող հայ սփյուռքագետներ տեղեակ են, որ Ռուսաստանի տարածքին կայ 900.000-են 1. 200.000 համեմատաբար նորեկներ, գլխավորաբար աշխատավոր հայ և ավելի սակավաթիվ մանր բուրժուազիա, այսինքն՝ քաղքենիներ, որոնք փոքր բիզնեսներ ունին: Ապա կը լսենոր կա նաև զորավոր միջին դասակարգ մը, որ կազմակերպված է 1922-1988 թվականներուն Ռուսաստան գաղթող հայերը, որոնք հաճախօժտված էինբարձր ուսումով. բժիշկներ, ինժեներներ, ռուս պետության պաշտոնյաներ, հաջող և բավական մեծ բիզնեսներու տերեր. բայց չունինք ոչ մեկ ճշգրիտ, վիճակագրականորեն վստահելի թիվ՝ այս բնակակչության մասին: Եվ վերջապես, գիտենք, որ կան մի քանի իսկական մեծահարուստներ, որոնցմե ոմանք ուղղակի կապված են Ռուս պետության կորիզային վերնախավին հետ:

Այս խառն ցրոնքի սփյուռքյան ապագան կռահելը չափազանց դժվար է: Գիտենք միայն թե Հրեական, Չինական, Հունական և նախա-եղեռնեան Հայ սփյուռքյան համայնքներու (այսպես կոչված գաղթավայրերու) մեջ, մեծահարուստ և բարձր-բուրժուական դասակարգը, գործելով կրոնական, բարոյական և մտավորական հեղինակություններու հետ, ղեկավարած է աշխատավոր և մանր-բուրժուա սփյուռքը, ստեղծած և ֆինանսավորած է կառույցներ: Սփյուռքներ, որոնք պետություն չունին, անպայման տկար և անկարող չեն. երբեմն ունին «stateless power», ոչ պետական, այսինքն պետութենազուրկ ուժ (stateless power). ուժ մը որ անշուշտ զինվորական չէ, սակայն համայնքին կարտոնե ինքզինք կազմակերպել, ապա կրթական և մշակութային կառույցներ ստեղծել ու կերտել: Ինչպես այլուր և նախապես, հայկական ցրոնքներու մեջ, նմանապես Ռուսիո մեջ տնտեսական ուժով, ապա նաև մտածողական և մտավորական կարողությամբ օժտված ղեկավարներու վերնախավ մը կրնա բազմաթիվ անելիքներ իրականացնել: (ա) սփյուռքյան համայնքներու ներքին կազմակերպումը, կառույցներ և հաստատություններ ստեղծելով և (բ) իրարմե անջատ և հեռու համայնքներու միջև, գոնե անոնց ղեկավարներուն միջև կապ պահելով, (գ) Ռուսահայ սփյուռքի և Ռուս պետական կառույցներու միջև իբրև միջնորդ գործելով, ապա (դ) Ռուսահայ սփյուռքի և Հայաստանի Հանրապետության միջև առողջ և աշխուժ կապեր պահելով. բան մը, որ իր կարգին կախեալ պիտի ըլլայ Հայաստանի պետության ջանքերեն, սփյուռքի հետ կապ պահող նախարարության ճկունութենեն և հնարամտությունեն: Այս նյութի քննությունը կը պահանջե ուսումնասիրություն և համեմատական մոտեցում՝ ուրիշ հայրենիք-պետություններու ճիգերուն և կառույցներուն հետ, երբ անոնք ալ կը փորձեն սերտորեն կապված մնալ իրենց հին սփյուռքներուն և նոր ցրոնքներու հետ: (Այս մարզին մեջ օրինակելի են Ալեքսանդրա Տելանոյի և Ալլըն Կամլենի հոդվածները):

Կարժե ընդգծել որ տնտեսական, քաղաքական և մշակութային վերնախավի հարցեը միշտ խնդրահարույց եղած են նույնիսկ՝ ազգ-պետություններու պարագային (տեսնել Ջոն Հիկլիի գործերը), և ալ ավելի՝ սփյուռքներու պարագային:

Երբ ցրոնքը միայն միգրանտներե, աշխատանք փնտրողներե կը բաղկանա («պանդուխտ», «ղարիպ» ևն), իսկական վերնախավ չկայ դեռ, բացի թերևս կրոնական առաջնորդներե, երբեմն: Սակայն անցնող ժամանակի ընթացքին կամ ցրոնքի անդամներեն ոմանք կը բարելավեն իրենց վիճակը և կը վերածվին վերնախավի, և կամ արդեն գոյություն ունեցող հատվածեն (այս պարագային թերևս 1922-1988 թվականներու Սովետահայ-Ռուսահայ բուրժուազիայեն) ոմանք կընդունվին իբր այդ: Նման անձեր հաճախ կը մերժվին իբրև ինքնակոչ, իբրև չընտրված և իրենք-զիրենք նշանակող անձեր, իբրև օ-

րինականություն (legitimacy) չունեցող. բայց և այնպես այս ինքնակոչ առաջնորդ, ղեկավար վերնախավը կը գոյանա կառույցներու, հաստատություններու, միություններու մեջ՝ շնորհիվ անձնական հարստության, ամբիցիայի և տաղանդի: Եվ անոնք են, որ «զորակոչ»-ի կամ մոբիլիզացիայի կենթարկեն իրենց հավաքականությունը:

Նման «ղեկավար»-ներ պետական ուժ չունին, սակայն կը համոզեն ոմանց և երբեմն կիրահանգեն (կազմակերպություններու կամավոր անդամներուն), որ գործի լծվին: Ղեկավար վերնախավի գործունեությունը, հայկական բազմաթիվ սփյուռքներու մեջ, ունի բազմաթիվ տարբերակներ՝ կախյալ վայրեն: Կան ոմանք, օրինակ՝ Լիբանանի մեջ, որոնք տասնամյակներ ընտրված են իբր «երեսփոխան»՝ Լիբանանեան պառլամենտի մեջ հայերու ներկայացուցիչ: Եղած են պետական նախարար, մինչ ուրիշներ՝ քաղաքացիական պատերազմի պարագային, մարտական և պահակ զինյալներու հրամանատար: Ուրիշներ, Հրայր Հովնանյան օրինակ՝ մեծ դեր ունեցած են նոր կազմակերպություններու ստեղծման և ղեկավարումին մեջ (Արմինիոն Ասեմպլի, Հայկական Համագումար՝ Վաշինգտոնի մեջ, ապա նաև Ժիրայր Լիպարիտյան և Գուրգեն Սարգիսյան՝ Զորյան հիմնարկի պարագային, ԱՄՆ-ի և Կանադայի մեջ: Անցյալին՝ հայ ամիրաներ, ապա վերնախավ ընտրանիի տարբեր խումբեր ղեկավարած են Պոլսահայ համայնքը՝ հիմնելով և ֆինանսավորելով բազմաթիվ համայնքային կառույցներ:

Տնտեսական, կազմակերպական, մտավորական և մշակութային կյանքը սփյուռքներու մեջ կրնա վերնախավ մը արտադրել, որ երբեմն ղեկավարի դեր կը ստանձնե: Արևմտահայ սփյուռքի պարագային ծանոթ են անուններ՝ Պողոս Նուբար Փաշա (ՀԲԸՄ), Վահան Թեքեյան և Գերսամ Ահարոնյան (Ռամկավար), Նիկոլ Աղբալյան, Ավետիս Ահարոնյան, Սիմոն Վրացյան (ՀՅԴ), ևն: Ռուսահայ սփյուռքի կազմավորման պարագային անկասկած տնտեսական վերնախավին շատ մեծ դեր վերապահված է, քանի որ կազմակերպչական մարզը ցարդ կը թվի նախնական մնացած ըլլալ: Սակայն նույնիսկ մոտավոր ապագան անգուշակելի է այս մարզին մեջ: Մշակութային կյանքի աստղ (celebrity) մը կրնա, օրինակ, ստանձնել անպաշտոն, բայց կարևոր զորակոչային դեր, ինչպես Շարլ Ազնավուր՝ Ֆրանսիայի մեջ: Նաև կա թվայնացված աշխարհեն հայտնվող նոր վերնախավի մը գոյացումի կարելիությունը:

Այս գրությունը կարելի չէ ավարտել, առանց ընդգծելու նոր, մեծ անորոշությունը, որ արևմտյան սփյուռքագիտությունը կը հետազոտե վերջին երկու տասնամյակներուն՝ առանց հստակ եզրակացություններու հանգելու: Հստակ է, որ ինթըրնեթ, Վեբ, ցանցային հաղորդակցություն, ի-մեյլ և հատկապես Facebook և YouTube կը փոխեն ավանդական հղացքներու իմաստը: Եթե քսան տարի առաջ միլիոնավոր

դոլար ունենալ կրնար բնորոշել, որ անձ մը էլիտար է, վերնախավին կը պատկանի, ներկայիս՝ միլիոնավոր հետևորդ ունեցող մը թվայնացված-ցանցային աշխարհին մեջ (օրինակ՝ Քիմ Քարդաշյան) թերևս տարբեր տեսակի վերնախավի մը կը պատկանի, սակայն հստակ չէ, թե ղեկավարային կարողությունով օժտված կամ ոչ: Գիտնականին և մտավորականին փորձությունը անմիջապես «ոչ» ըսել է, նման վարկած մերժել է, սակայն այդ բավարար չէ: Անցյալին՝ 18-րդ դարեն սկսեալ, հարցը, ժողովուրդը ազգի վերածելն էր, և այդ հատկապես մշակութային, ապա նաև քաղաքական ղեկավարներու աշխատանքն էր (Թաղիադյանց, Մկրտիչ Պեշիկթաշլյան, Ալիշան, Գամառ Քաթիպա, Աբովյան, Ռաֆֆի, ևն): 21-րդ դարուն, թվայնացված աշխարհի և եթերի մթնոլորտով ապրող զանգված մը դեպի նոր հավաքականություն, ի միջի այլոց դեպի նոր սփյուռք առաջնորդողները ովքե՞ր պիտի ըլլան, դեռ հստակ չէ: Գոյություն ունեցող ուսումնասիրությունները (Բրինգերհոֆ, Օնկ, Բերնալ, Փարհամ ևն) կընդգծեն ցանցաբնակներու մասնակցության ոգին և զարգացող խոսույթներու կամ տրամասույթներու (discourse) կարևորությունը: Ցանցին վրա գոյացող նոր «մտավորականությունը» կը թվի ըլլալ կռվազան բայց պերճախոս համոզողներու նոր դաս մը, որոնք սակայն վերնախավյան ղեկավարի կայուն դիրք ցարդ չեն կրցած գրավել ու պահել: Ցրոնքեն դեպի սփյուռք անցումը կը պահանջե, կը պարտադրե երիտասարդ, հավանաբար ռուսախոս նոր սերունդի մը ներքաշումը դեպի հայկական հավաքականության (սփյուռքային) հարցեր, և այդ շարժումի նոր Աբովյաններ ու Ռաֆֆիները հավանաբար թվայնացված, digital ոլորտի նոր, դեռ մեզի անծանոթ աստղերը պիտի ըլլան:

Հղված գրականություն

Bernal, Victoria. “Diaspora, cyberspace and political imagination: the Eritrean diaspora online,” *Global Networks* 6:2, (2006) 161–179. ISSN 1470–2266.

Brinkerhoff, Jennifer. Ed. Diasporas and development: exploring the potential, L. Rienner Publishers, 2008. 270 pages. ISBN 9781588266033.

Brinkerhoff, Jennifer. Digital Diasporas: Identity and Transnational Engagement, Cambridge University Press, 2009.

doi:10.1017/S0022381610000411

Delano, Alexandra and Alan Gamlen, “Comparing and theorizing state-diaspora relations,” *Political Geography*, 2014, pages 43-53. http://dx.doi.org/10.1016/j.polgeo.2014.05.005

Gamlen, Alan, Michael Cummings, Paul Vaaler and Laura Rossouw. “*Explaining the Rise of Diaspora Institutions*,” Working

Papers 78, November 2013. https://www.imi.ox.ac.uk/news/explaining-the-rise-of-diaspora-institutions-new-working-paper

Higley, John. Elitism. Routledge & Kegan Paul (with G. Lowell Field). 1980.

Ong, Aiwha. “Cyberpublics and diaspora politics among transnational Chinese,” *Interventions: International journal of postcolonial studies*, 5 (1): 82-100, 2003.

http://dx.doi.org/10.1080/13698032000049815

Parham, Angel Adams. “Diaspora, Community and Communication: Internet Use in Transnational Haiti,” in *Global Networks: A Journal of Transnational Affairs*, 4 (2): 199-217.

Parham, Angel Adams. “Internet, Place, and Public Sphere inDiaspora Communities,” Diaspora: a journal of transnational studies, 14:2/3, 2005, 349-380.

Хачик Тололян (США), *Возможность формирования новой армянской диаспоры в России с точки зрения современного диаспораведения*.

Khachig Tölölyan (USA), *The possibility of forming a new Armenian diaspora in Russia from the point of view of modern diaspora-studies.* This article is divided into two parts. The first summarizes key elements of the emergent discipline of diaspora studies, foregrounding the speed of the field’s growth, the heterogeneity of, first, the topics and objects of knowledge studied, and then of the multitude of disciplines in the humanities and social sciences that address them. The absence of a unified or dominant method of investigation is underscored, but there are areas of agreement, which are enumerated. Throughout, there is an emphasis on coexistence of the abstract concept of diaspora and the concrete reality of highly localized communities on the ground; the links between the latter and the homeland shape diasporas. The second part of the article focuses on what contemporary diaspora studies has to say about the factors that may convert migrant communities of dispersion into enduring diasporas. Furthermore, the likelihood that the new Armenian dispersion in Russia will turn into such a diaspora is considered. The most important factors are likely to be the attitude towards immigrants of the state and society of the countries that receive them, the economy and the niches it provides for them, and residential factors. Next, the importance of a leadership elite is emphasized. Their role is indispensable in the creation and guidance of diasporic institutions, in shaping connections with the ruling elites of the “host” country, as well as with the government of the “home” country. It is

pointed out that kinship ties between the dispersed and the homeland endure for one or two generations; after that, elites and institutions must sustain and innovate enduring diasporic connections. In the past, the elites of the Armenian diaspora have been clergy, the philanthropic wealthy, and intellectuals, using religion, money and mind to shape the community. However, this is not necessarily the pattern of the future, as a new factor of diasporic connectivity has emerged: the digital world, online communities, and new celebrities. How they will shape the dynamic of development of the Armenian communities in Russia remains to be seen.